


Յաջորդ օրը (մայիս 17) ս. Երրորդութեան տօնն էր : Լեւոնի կնքահայրութեամբ կատարուեցաւ Յովհաննէսի պսակադրութեան հանգէսը մեծ խրախճանութիւններով :



Լուվրի Պալատը

Le Palais du Louvre.

Հարսանեկան հանդէսներէ վերջ երկու թագաւորները Բաղսոգէ մեկնեցան եւ միասին դացին մինչեւ Լէոն քաղաքը, ուր Հայոց թագաւորն առ ժամեայ հրաժեշտ առնելով իր թագակից բարեկամէն՝ Գալիսիայի ս. Յակոբի վանքն ուխտի գնաց : Ետքէն Լէոնի մէջ կրկին միանալով իրարու հետ՝ Վալլադուլիի վրայով անցան եւ բռնեցին ճամբան Սեդովիայի, ուր Յովհաննէս Ա. ժողովի հրաւիրած էր Կաստիլյայի թագաւորութեան եկեղեցական եւ աշխարհական բարձր աստիճանաւորներն ու բոլոր իշխանները :

Օգոստոսի 14-ին հասնելով Սեդովիա՝ մի քանի օրէն գումարուեցաւ ժողովը, ուր Լեւոն խօսք առնելով պատմեց ժողովականներու, թէ ինք ի՛նչպէս « ի սէր քրիստոնէութեան » Հայաստան անցաւ եւ ձեռք առաւ Հայոց թագաւորութեան գեղն՝ հրամանով Ուրբանոս պապին, որ խոստացաւ օգնել իրեն, բայց բա՛ն մըն ալ չկրցաւ ընել : Նկարագրեց նաեւ, թէ ի՛նչպէս կորսնցուց իր թագաւորութիւնն եւ գերի տարուեցաւ Կահիրէ :